Ի որ Եւրոխորհրդական-նախագահական կառավարման տարբերակների շուրջ նորոյթ դրած քննարկումները դրա լուսավորչ վկայութիւնն են: Երկու տեսակէտների պաշտպանները ի վերջոյ մոռանում են, որ եւ այս, եւ այն կառավարման համակարգի պայմաններում հնարաւոր է ապահովել լիակատար ժողովրդավարութիւն, հասարակական եւ տնտեսական արդարութիւն: Դրա համար պարզապէս քաղաքական կամք եւ լրջախոհութիւն է պէտք: Սակայն այս ամէնը մոռացուած է, եւ յանուն մէկ բանաձեւում մի մեր պատգամաւորները չատերը պատրաստ են ծայրայեղութիւնների

գնալ: Այդ ընթացքում ոտնատակ են արւում կուսակցութիւնների արժէքը, պետական հաստատութիւնների վարկը, իրենց արժանապատուութիւնը, արդիւնքում՝ լուծման ցանկացած տարբերակի դէպքում կասկածի տակ են դրւում հասարակութեան լիակատար վստահութիւնն ու արակցութիւնը:

Հայաստանի Հանրապետութեան՝ Եւրոխորհրդի կազմում ընդգրկուելու գործընթացում այնքան տարբերակներ կան, որ մոռացանք հասարակութեանը ներկայացնել միջազգային այդ կազմակերպությունը ոչ թե Հայաստանի համար դրամատիկ է, այլ պարզապէս մեր երկրում ժողովրդավարության ամրապնդման, հին աշխարհի լուսավորչ փորձը օգտագործելու եւ Հայաստանը առաւել բարեկեցիկ ափ հասցնելու միջոց:

Քննարկումները արդիւնքում այնքան ենք տարւում տարբեր միջոցների ընտրութեան շուրջ եղած վիճարկութիւններով կամ տեսակէտների պաշտպանութեամբ, որ, իրրեւ հետեւանք, անտեսւում է արդիւնքը:

Մամուլի մասին օրէնքի՝ վերջերս կառավարութեան կողմից վաւերացուած չարքայտիկ նախագիծը մեր պաշտօնեաները արդարացնում են ոչ թե առաւել ազատ խօսք, պատասխանատու ու առարկայական տրուուութիւն ապահովելու նպատակադրումով, այլ պարզապէս օրէնքը Եւրոխորհրդի համաձայնութեանը ընդունելու մտադրութեամբ: Արդիւնքում՝ չի քննարկուում՝ իսկ եթէ դա արդար չլինի, ազատ մամուլ ձեւաորային նպատակին չծառայի: Սա անտեսուում է, քանզի շատերի համար այս նպատակը կորցրել է իր իմաստը, եւ մնացել է սոսկ «Եւրոխորհրդի» ըստ էութեան, անհասկանալի ձեւակերպումը:

Մենք ուզում ենք վերացնել մահապատիժը մարդասիրական, բարոյական կամ որոշ այլ հասկացութիւնների հիման վրայ, թէ՞ ուղղակի Եւրոխորհրդի սիրոյն: Տպաւորութիւնն այնպիսին է, որ ուղղակի վերջինիս համար: Անտեսում ենք, սակայն, այդ քայլի՝ հայկական հասարակութեան հաւանական առողջացմանը նպաստելու գործօնը, ու հիմնարար բարոյական հասկացութիւնների սկզբունքը:

Տարուած տնտեսական աճի՝ կառավարութեան հրապարակած ցուցանիշներով, 9,8%ը դարձրել ենք պաշտամունքի առարկայ, ամէն քայլափոխի խօսում, ազդարարում ենք այդ մասին, սակայն մոռանում ենք, որ այդ ցուցանիշը պէտք է ապահովի որչափ հասարակութեան ընկերային վերելքը, մինչդեռ սարակուութեան հսկայական մասի համար անձանթ Եւրոխորհրդի բառի պատեհ - անպատեհ կրկնութեամբ, ընկած ծայրայեղութեան մէջ, պարզապէս ուրախանում էինք այդ կազմակերպութեան կազմում ընդգրկուելու մտադրութեան ժամանակ կան սկզբունքներ, որոնք պէտք է որդեգրուեն: Փոխարէնը՝ Եւրոխորհրդի հայկական քաղաքական վերնախաւի համար դարձաւ սոսկ այս կամ այն քաղաքական քայլը արդարացնելու միջոց:

Մամուլի մասին օրէնքի՝ վերջերս կառավարութեան կողմից վաւերացուած չարքայտիկ նախագիծը մեր պաշտօնեաները արդարացնում են ոչ թե առաւել ազատ խօսք, պատասխանատու ու առարկայական տրուուութիւն ապահովելու նպատակադրումով, այլ պարզապէս օրէնքը Եւրոխորհրդի համաձայնութեանը ընդունելու մտադրութեամբ: Արդիւնքում՝ չի քննարկուում՝ իսկ եթէ դա արդար չլինի, ազատ մամուլ ձեւաորային նպատակին չծառայի: Սա անտեսուում է, քանզի շատերի համար այս նպատակը կորցրել է իր իմաստը, եւ մնացել է սոսկ «Եւրոխորհրդի» ըստ էութեան, անհասկանալի ձեւակերպումը:

Պատմում են, որ Մարտիրոս Սարեանը, խօսելով ժամանակին տարածում գտած, տարբեր բառակապակցութիւնները յապաւումներով ձեւակերպելու մոլուցքի մասին, կիսակատակ արձանագրել է: «Վախենամ, մի օր էլ մոռանանք՝ ինչ բառերից են այդ յապաւումները կազմուած»:

Հիմա նոյն վիճակն է: Այնքան ենք տարուել միջոցների փառարանութեան, դրանց շուրջ պայքարով ու քննարկումով, որ մոռացուել է նպատակը՝ Հայաստանի զարգացումը, հասարակութեան բարօրութիւնը:

Հիմա նոյն վիճակն է: Այնքան ենք տարուել միջոցների փառարանութեան, դրանց շուրջ պայքարով ու քննարկումով, որ մոռացուել է նպատակը՝ Հայաստանի զարգացումը, հասարակութեան բարօրութիւնը:

## ԵՒՐՈՒՅՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՍՈՍԿ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԿՈՉ ՉԻ ԱՆՈՒՄ

Փետրուարի 28ին Եւրոխորհրդարանը հաստատեց «Կանաչներ» խմբի շուկայային պատգամաւոր Փէրկարթոնի պատրաստած «Հարակուսական գեկուցագիրը», որը կոչ է անում թրքական իշխանութիւններին ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը: Այդ մասին մեզ նոյն օրուան հաղորդագրութեամբ տեղեկացրել էր «Նոյնացի Տապան» գործակալութիւնը՝ մասնաւորապէս նշելով, որ գեկուցագրով Թուրքիային յիշեցուում է 1987 թուականի Յունիսի 15ին Եւրոխորհրդարանում Հայոց ցեղասպանութեան ճանաչումը, եւ շեշտուում են Հայաստանի համար Ազգայնականի տրամադրուող թրքական ռազմական օտանդակութեան բացասական հետեւանքները, ինչպէս նաեւ հայկական պետութեան մեկուսացումը:

Յատկանշական է, որ այս մեկուսացումն անմիջականօրէն պայմանաւորուում է քաղաքական այն աջակցութեամբ, ինչը Թուրքիային է տրամադրում պաշտօնական Ուաշինգթոնը: Այլ կերպ՝ Եւրոխորհրդարանը Հայաստանի նկատմամբ թշնամական քաղաքականութիւն որդեգրած Թուրքիային աջակցելու համար անուղղակի դատապարտում է Ուաշինգթոնին:

Եւրոխորհրդարանի «Հարակուսական գեկուցագիրը», ցաւօք, Հայաստանում գանգուածային լրատուամիջոցների պատշաճ ուղղորդութեանը չարժանացաւ: Հակառակ դրան, թրքական պետական հեռուստատեսութիւնն ու մամուլը դեռ փետրուարի 27ին գեկուցագրի բովանդակութեան էին անդրադառնում՝ մատնանշելով, թէ Եւրոխորհրդարանն ինչպէս է թէկուզ անուղղակի Ուաշինգթոնին դատապարտում: Թրքական հեռուստատեսութեան անդրադարձումը՝ որը յազգեցած էր մեկնաբանութիւններով, նշուեց: «Ձեկուցագրով Եւրոխորհրդարանը գտնուում է, որ Թուրքիան Հայաստանի համար սպառնալիք է, Միացեալ Նահանգները աջակցում են նրան: Թրքական շրջափակումն այլ ելք չի թողնում հայերին, քան իրանի հետ մերձեցումը, պէտք է աջակցել հայ-իրանական մերձեցմանը»:

Ինչ վերաբերում է Հայոց ցեղասպանութեան ճանաչմանը, ըստ նոյն աղբիւրի, ինչպէս նաեւ «Սապահ» թերթի, Եւրոխորհրդարանը ճանաչման հարցում Հայաստանի հետ հաշտուելու կոչ է արել Թուրքիային՝ պատճառաբանելով, թէ 1921 թուականի Ապրիլի 10ին Թուրքիայի Ազգային Մեծ ժողովում՝ Մեքիսում, ժամանակակից Թուրքիայի հիմնադիր Մուսթաֆա Բեմալ Աթաթուրքն իր ելոյթով արդէն ճանաչել էր: Պետական հեռուստատեսութեամբ կտրակապակց հերքուեց գեկուցագրում Բեմալ Աթաթուրքի ճանաչմանն առնչուող այս տուեալը՝ աւելացնելով. «Նա չէր կարող ճանաչել այսպէս կոչուած հայերի ցեղասպանութիւնը, քանի որ 1921 թուականի Ապրիլի 10ին Մեքիսում չի եղել Կոնստանդուպոլիս»:

Հայոց ցեղասպանութեան հարցում, չնայած այլ տուեալների առկայութեանը, կարելու էր Բեմալ Աթաթուրքի ելոյթը չէ, այլ եւրոպական այն երկրների դիրքորոշումը, որոնք դեռ չեն ճանաչել այդ ցեղասպանութիւնը: Ի դէպ, Եւրոխորհրդարանի գեկուցագրով ուղարկութիւն է հրաւիրուում այս ճանաչմանը եւ ընդգծուում, որ Հայոց ցեղասպանութեան ճանաչումը եւրոպական այլ երկրներում կարելու էր քայլ է լինելու, որպէսզի դա ճանաչի նաեւ Թուրքիան: Եւ վերջապէս, գեկուցագիրը Հայաստանը շրջափակելու համար դատապարտում է Թուրքիային:

Հայոց ցեղասպանութիւնը ճանաչելու մասին Թուրքիային հասցեագրուած Եւրոխորհրդարանի կոչը թրքական քաղաքական շրջանակներում նոյնացուում է ճնշուած գործադրելու հերթական փորձի հետ: Ըստ նրանց, դրա նպատակը հայ-թրքական յարաբերութիւնների բարելաւումն է: Ուրեմն, մենք գործ ունենք բարելաւման եւրոպական նախաձեռնութեան հետ, ինչը, ըստ երեւոյթի, աւելի նախընտրելի է, քան ամերիկեանը:

Հայոց ցեղասպանութիւնը ճանաչելու մասին Թուրքիային հասցեագրուած Եւրոխորհրդարանի կոչը թրքական քաղաքական շրջանակներում նոյնացուում է ճնշուած գործադրելու հերթական փորձի հետ: Ըստ նրանց, դրա նպատակը հայ-թրքական յարաբերութիւնների բարելաւումն է: Ուրեմն, մենք գործ ունենք բարելաւման եւրոպական նախաձեռնութեան հետ, ինչը, ըստ երեւոյթի, աւելի նախընտրելի է, քան ամերիկեանը:

Հայաստանը մեկուսացում է, այլապէս Եւրոխորհրդարանն իր գեկուցագրում Հայաստան-իրան մերձեցման մասին չէր արտայայտուել: Քանի որ Իրանի հետ մերձեցման շնորհիւ առնուազն կարելի է Պարսից ծոց դուրս գալ, ուստի Թուրքիան Հայաստանի համար արտաքին աշխարհ դուրս գալու միակ պատուհանը լինել չի կարող: Հայաստանը մեկուսացման խնդիր չունի, բայց որ եւրոպական երկրները նրան թրքական միջնացքով Եւրոպա դուրս բերելու խնդիր ունեն, ակնյայտ է: Այս դէպքում վերջիններս նոյն միջնացքով Անդրկովկաս են ներթափանցում, որտեղից էլ Միջին Ասիա ներթափանցելու հնարաւորութիւն են ձեռք բերում: Այլ կերպ՝ նրանց ներթափանցումը Հայաստանն է ապահովում:

Այնուամենայնիւ, Եւրոխորհրդարանի վերոյիշեալ գեկուցագիրը Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման առումով չափազանց դրական տեղաշարժ է: Ինչ վերաբերում է Հայաստանի միջոցով Անդրկովկաս ներթափանցելու եւրոպական միտումներին, ապա դրանք էլ դրական են դարձնում ինչպէս Անդրկովկասում եւ Միջին Ասիայում, այնպէս էլ Մերձաւոր ու Միջին Արեւելքում միանձնեայ ռազմական ներկայութեան պաշտօնական Ուաշինգթոնի միտումները եւ այն մրցակցութիւնը, որ նշուած շրջաններում Միացեալ Նահանգների հետ ծաւալում է Եւրոմիութիւնը:

ՅԱԿՈՒ ԶԱՔՐԵԱՆ

## ՀԱՄԱՇԽԱՐ ՀԱՅՆԱՅՈՒՄԸ ԵՒ ՄԵՆՔ

Համաշխարհայնացման հարցերով Նիւ Եորքի մէջ գումարուեցաւ ժողով, որուն մասնակցեցաւ նաեւ Հայաստանի արտաքին գործոց նախարարը: Նիւ Եորքի գոլգահեռ, Փորթո Ալլեկրէի մէջ, Պրազիլ, գումարուեցաւ տրամագծօրէն հակառակ ժողով մը, որ մտահոգութիւն յայտնեց համաշխարհայնացումէն յառաջանալիք հետեւանքներուն գծով: Մասնակցեցան միջազգային հանրութեան եթէ ոչ ղեկավարները, բազմազգ ընկերութիւններու հզօր բանբերները, ղէթ՝ հասարակութեան լայն խաւերու, վտանգուած տնտեսութիւններու եւ մշակոյթներու ներկայացուցիչները, որոնք կրնային խօսիլ մոլորակի բնակչութեան իսկական մեծամասնութեան անունով: Հայաստան, Արցախ եւ հայեր բացակայ էին, մինչդեռ մեր ազգի երեք թեւերու հարցերու պարզաբանման համար բնական եւ բնորոշ բեմ էր Փորթո Ալլեկրէն: Ըստ սովորութեան, ոսկեղէն առիթ մը փախցուցինք: Միթէ այնքան միամիտ ենք խորհելու համար, որ լծուելով հզօրներու սայլին՝ պիտի բարեկալեք մեր ազգին եւ ժողովուրդին վիճակը:

Ինչո՞ւ պէտք էր երթալ Փորթո Ալլեկրէ: Ինչո՞ւ պէտք է գործօն մասնակցութիւն բերել հակահամաշխարհայնացման շարժման: Նախ պէտք է ըմբռնել, թէ ի՞նչ նպատակ կը հետապնդէ համաշխարհայնացումը եւ ի՞նչ գործելակերպ որդեգրած է: Ինչպէս կ'ըսեն, ֆիլու արթիսթը մը կը տիրէ այս հարցերուն շուրջ, խաղաթուղթերը չեն բացուիր, բացուած ըլլալու պարագային անոնք այնքան բարդ են եւ խրթին, որ անմատչելի են, ինչպէս կ'ըսուի, հասարակ մահկանացուներուն, որոնք առարկան են համաշխարհայնացման քաղաքականութեան, տնտեսական, մշակութային, բնութեան օգտագործման եւ մարդկային: Նշուած չորս կէտերը ո՞վ կը բռնայ անոնց իսկական ըրովանդակութեամբ, բացառապաշտելու համար ինչ որ թաքուն է, ինչ որ կայ ըսուածի ետին իրրեւ չըսուած: Այս՝ ընդհանրապէս: Իսկ մեր յատուկ պարագային, թող վիրաւորական չճամբարուի, եթէ կրկին ըսենք, որ գրագրական դարձած ենք մանրիկ բարեխիղճներու եւ անգամաւաւորական ոլորտներուն մէջ: Եթէ չխօսուի, եթէ նոյն այդ հասարակ մահկանացուները, գիտակցական բացառիկ ճիշդ մը, չհարցապնդեն, օր մը մենք մեզ պիտի գտնենք նոր դիմակ կրող միջակային-ապագային դրամատիքական ուսկանին մէջ, եւ այդ ստեն թեւերու թափահարումը անօգուտ պիտի ըլլայ:

Տնտեսութեան համաշխարհայնացումը ունի պարզ սկզբունքներ. աւելցնել արտադրողական կարողութիւնը առաւելագոյն խնայողութեամբ եւ նուազագոյն աշխատանքով, հետեւաբար՝ նուազագոյն ծախսով, օգտագործել մոլորակին աղբիւրները նուազագոյնը ծախսելով, եւ ի հարկէ, այս բոլորը ծառայեցընելով մեծ դրամաւորուի առաւելագոյն պտղաբերման: Կը նշանակէ, որ համարանքէ բխած փոսն մարդու զօտագործումը ծնունդ պիտի տայ թերած եւ անձան ընթացքի մէջ եղող երկիրներու շահագործման, մանաւանդ որ արհեստագիտութեան զարգացումը, փոխանակ յառաջացնելու անձան հաւասարեցումը ընթացք, կ'ընդլայնէ գարգացած երկիրներու եւ միւսներու միջեւ գոյութիւն ունեցող տարբերութիւնները, փոսը: Փոքրիկ երկիրները, հետեւաբար՝ փոքր ազգերը, պիտի հարթուին համաշխարհայնացման եւ զարտարարութեան ու արտադրութեան հսկայացման յորձանքին մէջ: Այդ է համաշխարհայնացման ներքին անշեղ եւ տրորող տրամաբանութիւնը: Առաւելագոյն շահաբերութեան մղումով կրկին պիտի կողոպտուին բնական աղբիւրները, ինչպէս վաղ պողոթնարարութեան օրերուն: Մեծ դրամագրուելի նոր տիրապետութեան ճնշման պիտի ընկերանայ արդէն ընթացքի մէջ եղող մշակութային նոր տիրակալութիւնը՝ տնտեսութեան հետ ամերիկայնացնելով մշակոյթը, մշակոյթները: Հայաստանի մէջ անսանձ կերպով կը գործանայ ամերիկեանը, որուն պատանդական է Ամերիկեան համախարհայնացման Միութեան փուլումը ձեւով մը կասեցուց սովետամարդու ստեղծման ընթացքը, թէեւ դեռ չեն դարձմանուած աւերին հետեւանքները, բայց այժմ կը մտնենք նոր ընթացքի մէջ, ամերիկամարդու ստեղծման յորձանքին մէջ, կամ ծնունդ պիտի առնէ Հերպերտ Մարքիւզի միատարածք-միաչափ մարդը, l'homme unidimensionnel, եթէ ձեւաւածալ մնանք:

Եթէ հայ ազգային մտածողութեան տեսանկիւնէն մօտենանք աշխարհի հարցերուն, աւելի քան երբեք անհրաժեշտ է հետաքրքրուիլ համաշխարհայնացումով եւ անոր հետեւանքներով, այսօր, որովհետեւ յետոյ կրնայ ուշ ըլլալ: Ինչպէս կ'ըսէի այս խորհրդածութեան սկիզբը, զարմանալի եւ ցաւալի է, որ Փորթո Ալլեկրէի հակահամաշխարհայնացման հաւաքին Հայաստան, հայկական կուսակցութիւններ եւ կազմակերպութիւններ բացակայ էին:

Ժողովուրդներ ներկայ էին հոն՝ ինքնութեան եւ ինքնորոշումներու պաշտպանութեան ի խնդիր:

Յ. ՊԱԼԵԱՆ

«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ  
«ԱԶԳԱԿ»Ի ԲԵՏ ԿԱԿՈՒԵԼՈՒ ԲԱՄԱՐ ԲԵՏԱՃԱՅԵԼ  
ԲԵՏԱԵԼԱՅԻ ԹԻԻԵՐՈՒՆ - 258526, 260115 ԵՒ 241274:

ՏԱՐՈՆ ՄԵԻԹԱՐԵԱՆ  
«Երկիր»

**VALSE**  
International Cosmetics

Amten Haroutunian & Co.  
DORA - Magie Al-Hay Str. - Tel: 01-265-449  
Fax: 01-324617 - P.O. Box: 90-150 Beirut-Lebanon

«ԱԶԳԱԿ»Ի ՄԵՉ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անձեր, որոնք կը փափաքին «Ազգայն» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատնում՝ ծանուցումներու բաժանմունք հասցնել հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՅԻՆ ԺԱՄԸ 5:00:

ՄԱՀԱՊԱՆԵՐԸ բացառութիւնն է: Մահագոյ կ'ընդունուի միայն ուշ գիշեր, այճաքն ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

«Ա.զ.գ.»

# Աշակուբային Էջ

## Ս Պ Ա Ն Ի Ա

### ԿԵՐՊԱՐՈՒԵՍՏԻ ԱՆԵԱԽԸՆԹԱՅ ՑՈՒՑԱՀԱՆԴԻՄ՝ Հ. Ս. Գ. ՄԻՈՒԹԵԱՆ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ԿԵԴՐՈՒՆ ՄԷՋ


Հովանաւորութեամբ Լիբանանի մէջ Հայաստանի լիազօր եւ արտակարգ դեսպան Արեգ Ցովհաննիսեանի, կազմակերպութեամբ Հայ Սեւ Գօտիններու Միութեան Լիբանանի մասնաճիւղին վարչութեան եւ գործակալութեամբ «Նոազ Արք» ցուցասրահի տնօրէնութեան, իր բնօրինակ եւ տարողութեամբ կերպարւեստի աննախընթաց խմբային ցուցահանդէսի մը բացումը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 15 Մարտի երեկոյեան ժամը 6:30ին, Հ. Ս. Գ. Միութեան Պուրճ Համուտի կեդրոնին մէջ:



«Ծաղկեկողով». քրանկարը՝ Ժաքլին Օհանեանի:

Ցուցահանդէսի մը բացումը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 15 Մարտի երեկոյեան ժամը 6:30ին, Հ. Ս. Գ. Միութեան Պուրճ Համուտի կեդրոնին մէջ:

Ցուցահանդէսի մը բացումը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 15 Մարտի երեկոյեան ժամը 6:30ին, Հ. Ս. Գ. Միութեան Պուրճ Համուտի կեդրոնին մէջ:



«Կիր» շարքէն պրոնգաձոյլ քանդակագործ՝ Սկրոյի Սազմանեանի:

Թերզեան, Միրէյ Կոկիլեան, Մարալ Տէր Պողոսեան, Մանուկ Գրիգորեան, Լիւսի Թիւթիւնեան, Լուսին Գարիբեան, Լենա Պապահէբեան, Գրիգոր Ակոբեան, Գօգօ Կարապետ, Գոհար Կարապետեան, Գէորգ Ուլաշեան, Ժիրայր Հատիտեան, Ժաքօ Ռոստիկեան, Իշխան Նազարեան, Իրա Պալթայեան, Իկոր, Հրաչ Այնթապեան, Հրանդ Եւսէիսէ, Հրայր Տիարպէթիբեան, Մէլիքի Ռուտ Պետրոսեան, Մկրտիչ Մազմանեան, Յարութիւն Թորոսեան, Յարութի Չուլհայեան, Համլէթ Մաթեոսեան, Յակոբ Գէորգեան, Յակոբ Ժամկոչեան, Կիւլէն Տէր Պողոսեան, Զործ Ամպարեան, Էտուրտ Սարգսեան, Տիգրան Մատուլեան, Տարիա Հատիշեան, Եմալոն Եմալոսեան, Եւա Տէր Պողոսեան, Արթուր Քիւրի, Արտօ Համբարձումեան, Արա Ազատ, Աննա Յարութիւնեան, Ալէքս Ճ. Աղասի եւ Յարութիւն Աղաճանեան: Լուսանկարիչներ՝ Սեւակ Սերոբեան, Լեւոն Թաշճեան, Իսա Թումա, Յակոբ Միքայէլեան, Յակոբ Քանյեան, Կրեթա Թորոսեան, Քարլոս Ժողջ Պուրճեան եւ Ալէն Կիւլիբեան: Իսկ Փօլ Կիրակոսեանի եւ Բագրատ Գրիգորեանի (որոնք առյաւէտ բաժնուած են մեզմէ) ցուցահանդէսները գործերը նուէր տրուած են «Նոազ Արք» ցուցասրահի տնօրէնութեան կողմէ:

Ինչպէս ընթացող պիտի նկատէ, յիշեալ կերպարւեստագէտներուն կարեւոր մէկ մասը արդէն իսկ ինքզինք ճատարած անուանի արուեստագէտ է: Անոնցմէ շատեր նոյնիսկ արժանացած են միջազգային ճանաչման: Այս իրողութիւնը ինքնին կը վկայէ ցուցահանդէսի որակին եւ մակարդակին մասին:

Ցուցահանդէսը արժանի է ուշադրութեան ոչ միայն անոր համար, որ ան ընդհանուր գաղափար մը կը տայ մեզի Հայրենի, լիբանանահայ եւ սուրիահայ կերպարուեստի մասին, այլ նաեւ՝ անոր համար, որ Հոն ցուցահանդէսի զորութեամբ արուեստի զործերուն վաճառքի գիները գեղիչեալ են եւ լաւապէս կը յարմարին լիբանանահայ արուեստասէրներու գնողական կարողութիւններուն:

Կոստան Զարեան ծանօթ էր նաեւ իր հմուտ արուեստաբան: Անոր աշակերտները միշտ երախտագիտութեամբ յիշած են եւ կը յիշեն անոր դասախօսութիւնները: Հայրենի գրականագետ եւ արուեստաբան Եւրոյի Նաչատրեանի եւ «Սպանիոյ» մասին ստորեւ տրուած անոր ակնարկը կարեւոր փաստեր կու տան մեր կարգուած հաստատումին:

Ի՞նչ ցեղ եւ ի՞նչ պատմութիւն...  
Խօյ ու շառաչող մի աշխարհագրութիւն, խառնաշփոթ մի քարտէս՝ լեցուն տարբերքների որոտումներով եւ ժողովուրդների վիթխարի պայքարներով:

Ցեղերի լաւաները հոսում են անպատանեւոր ճանապարհներով, մագլցում լեռները, ամրապնդում մերկ ժայռերի կատարներ, տարածում գետերի շուրջ, նուաճում ծովափերը: Հազար ամրապնդում՝ ահաւասիկ որ Ափրիկէն, Փոքր Ասիան, Արեւմուտքը, մերկ ձիերի վրայ նստած, տափակ քիթերով եւ երկայն մազերով բարբարոսների վոճմակներ են զրկում, իրենց կարգին լաւալի նման տարածում, նուաճում, ամրապնդում, մինչեւ որ հերթը գայ երկրագնդի ուրիշ մասերից եկած արշաւողներին:

Իսպանները բարձրանում են հարաւից հիւսիս, պաքերի խորհրդաւոր երկու ցեղերը, որոնց լեզուն մինչեւ հիմա մնացել է առեղծուածային, գալիս են Փոքր Ասիայից կամ Կովկասից, կելտերը իջնում են հիւսիսից ու խառնում իսպանների հետ: Փիւնիկցիները եւ Ասիայի յոյները ստեղծում են Քատիքսը, Մալական եւ Սալոնիթէն: Կարթագենացիք հիմնում են Կարթագէնը եւ Պարսելոնան: Հռոմէացիները նուաճում են Սեւիլիան եւ ապա ամբողջ ինքնակզին, որին ենթարկում են լատինական ազդեցութեան:

Ու ահա հռոմէական աշխարհի մեծ անկումը, մինչ սվեները անցնում են Փիրենեան լեռները՝ լքելով Գերմանիան, սլաւոնական այլեւնեքը, վանտալները եւ, շատ հաւանական է, թաթարները դիմում են նրանց օրինակին: Մեծղի ջարդեր, հրդեհներ, անսիրտ են անմիտ կոտորածներ եւ թալան, անիշխանութիւն եւ քառս:

Եւ նաեւ Ափրիկէի մասմետականները... Նախ, մի քանի ձիւղեր, խմբեր: Կողոպուտ եւ աւար: Ապա, ամբողջ մի բանակ, Ալեքսիայի վայրի թարիկ անունով թիկնապահի զեկութեան ղեկավարութեան տակ, ափ ելած ձեպէլ-էլ-թարիկի մօտ, որ աւելի ուշ պիտի անուանեն ձիւղալիթար:

Այդ լուծը տեւում է երեք դար: Մահմետական Սպանիան դառնում է աշխարհի մեծագոյն քաղաքակրթական կենտրոններից մէկը, Ապուլ-Ռահմանը՝ հզօր եւ խելացի մի թագաւոր. ստեղծում է հրաշալի մի արւեստ, հիմնում են բարձրագոյն դպրոցներ, որ գարկ են տալիս գիտութեան եւ փիլիսոփայութեան: Անպատանեքը ոտուկում են, երկիրը հարստանում է, ի՞նչ աւելին բաց, Սպանիայի ոգին, նախ ընկճուած, գրեթէ անհետացած, կամաց-կամաց արթնանում է, ձեւաւորում իր սրբերի եւ հերոսների միջոցով եւ վերջապէս, մեծացած, ալեկոծուած, նա գրոհ է տալիս թշնամու դէմ եւ ճակատագրական պայքարները ետքը, աստիճանաբար վերականգնում իր անկախութիւնը եւ պատրաստում իր մեծ, պատմական դերին:

Այդ մեծղի խառնուրդից, հսկայական այդ կրակների միջից առաջ է եկել պողպատի նման դարբնուած մի ցեղ, որ, կրկնելով հռոմէական ժեսթը, աւելի ուշ, կարողացել է նոր Աշխարհում ստեղծել քանի մօտ ազգեր, որոնք դեռ շարունակում են խօսել

իրենց լեզուն, գտնուում են իր մշակութային ազդեցութեան տակ, եւ որոնց դերը ամբողջական նոր քաղաքակրթութեան մէջ շատ աւելի մեծ պիտի լինի, քան կարծում են:

Սպանիայի պատմութիւնը կանգ չի առել, նա թեւակոխել է ուրիշ մի շրջան, որ դեռ գոյացման մէջ է: Նա որոշ չափով դադարել է ազգ լինելուց, եթէ բառը ընդունենք արդիական ինքնաբաւ եւ սահմանափակ պետականութեան միտքով: Նա իրեն համարում է raza եւ իր դասական լեզուում naciones չի նշանակում ազգ, այլ՝ ընտրեալ ցեղ, որի դերը համաշխարհային է:

Սպանիայի ոգին տարածողական, հաւաքի բնոյթ է առել:

Նրա ստեղծագործական թափը տարածւել է դէպի լատինութիւնը: Նա կազմել է բազմաթիւ ուրիշ կենտրոններ, առանց սակայն կորցնելու իր միութիւնը: Կոնկիստադորների կատարած աշխատանքը դեռ կանգ չի առել: Մեծաշունչ արկածախնդրութիւններ իրենց ետեւ սերմեր են թողել, որոնք անպատանեքի, փամփանեքի եւ խիտ անտառների ծոցում շարունակում են ծաղկել, գարգալալ, ստուերախիտ ճիւղեր նետել:

Քասթիլիայի գեղեցիկ եւ հնչուն լեզուն ներկայ է ամէնուրեք:

Ինչպէս դարեր առաջ մայր երկրում, այնտեղ, մշակութային այդ հեռուոր գաղութներում ցեղերը եւ աստուածները խուլ պայքար են մղում իրենց գերագոյն համադրութիւնը գտնելու համար: Ազգէջների հոյակապ տիգրապիտութիւնը եւ առեղծուածային կրօնազգացողութիւնը, տարօրինակ կերպով խառնուելով յիսուսականների վարդապետութեան, ճգնում են ստեղծել նոր հոգեբանական այն տիպարը, որ, շատ հաւանական է, վաղը պիտի խաղայ կարեւոր պատմական դեր Մաղապահի փառքին:

Սպանական ոգին նորից դժուարին պայքարի մէջ է: Կենտրոնից հեռու, նա նորից կրկնում է իր պատմութիւնը: Նորից ցեղերի, լեզուների, կրօնների խառնուրդը, օտար ժողովուրդների աւերիչ արշաւանքները, տեւական պայքարները, շերտաւորւող հասարակական մտայնութիւնների կազմութիւնները, անհնազանդ եւ վտանգալի ընկերային կեանքի մրրիկը, քաղաքական անորոշութիւնը: Եւ սակայն յաղթող միշտ մնում է razad, կենտրոնաձիգ ոգին, չափաւոր ստեղծագործ այն թափը, որ պարմտածման առջև հանդիմանում է անհասկանալի եւ խորհրդաւոր:

Պարզ է մի բան. Սպանիան գերազանցապէս է՝ Եւրոպական ջղագրգիռ ժողովուրդ է նրա ձայնը գրեթէ չի լսում. նա թուում է կէս մրափած, մինչ իրականի մէջ իր ամէն տեղ է՝ կենդանի եւ ներուժ:

Ինչքան նշանակալից են թաթարաթաթուր եւ խորհրդաւոր այն փոխարարութիւնները, որոնք ստեղծում են երկրի եւ մեր մէջ: Նրանք ստանում են գրեթէ երաժշտական բնոյթ, դաշնակութեան այն բախտաւոր ձեւը, որ ընդգրկում է մեր ամբողջ էութիւնը, իջնում մեր գիտակցութեան տակ ձիգող աշխարհը, բոյնը կազմում, թուիչք առնում եւ լինելութեան նոր վիճակներին խորախոր իմաստներ տալիս:

Ի՞նչը երկիրը: Ոչ թէ, ինչպէս իտալիայում, արուեստի եւ ճարտարապետութեան

### ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆԸ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐՈՒՄ

1933 թուականին, երբ «Բանկոտպը եւ մամուլի ոսկորները» վէպի տպագրութիւնը «Հայրենիք» ամսագրում մօտենում էր աւարտին, Կոստան Զարեանը, ծաւալի շուրջ ղեկավարութեան նամակ ստանալով խմբագրից, ընդհանուր է վէպը: Այդ ժամանակ գրողը ապրում էր Միլանում: Վերադարձից ան վճարութիւնից նա նոյնիսկ հիւանդանում է: Բժիշկները խորհուրդ են տալիս փոխել միջավայրը, գնալ Զանգատանալու: Գրողը մտածում է մեկնել Ամբրիկա, յետոյ փոխում է որոշումը, գնում է Աւրոնա (Չուրիցերի), ուր մի քանի ամիս մնալուց յետոյ ընդունում է Միլանի «Esame» եւ «Ambrosiano» պարբերականների առարկութեւ նրանց միջոցով ու օգր

իբրեւ ճգնաժամից դուրս գալու ելք նա հայրենիք է փնտրում, փնտրում է մի երկիր, որ իր բնութեամբ, իր աշխարհագրութեամբ, կլիմայով, հողով ու ժողովրդով Հայաստան յիշեցնէր, գոնէ փոխարինէր Հայաստանին կամ, որն առաւել հաւան է, իր մէջ վերստացնէր Հայաստանի իրական, շօշափելի, առարկայական ներկայութիւնը: Նկարչականօրէն պերճաշուք, հարուստ ու շքեղ եւ գրողին այնպէս սիրելի իտալիան, ուր նա ապրել էր տարիներ, կամ թէ՛ Եւրոպայի կենտրոնում ապագով երկրներին ապագով մարդկանց համար յիբա-

զործական ուժի եւ մշակութի, նրա ժողովրդի, նրա գիւղերի ու քաղաքների, նրա ճանապարհների ու նրա քարերի ամէն, ամէն ինչի մասին, որ Հայրենիք-Հայաստանն է:

Եւ քանի որ Կոստան Զարեանը համար Հայաստանի երազարձի ճանապարհ չկար, նա գնում է իր Հայաստանը գտնելու Սպանիայում:

\*\*\*

Այսպէս, իր հայրենիքից երկու արտաքսուած գրողի որոնումներում ծնւում է Հայ գրականութեան ամենաբանալի կողմնակիցներից մէկը՝ Կոստան Զարեանի «Սպանիա»:

ԵՆՈՒՐԻ ԽԱՉԱՐԵԱՆ «Գարուն», Օգոստոս 2000

Շար.՝ էջ 8







# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



# ԱՇԽԱՐՀ



## ՆՇՄԱՐ

### ԳԵԹ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ... (ՌԱՍԻՆԿ - Յ.Մ.Ը.Մ. ՄՐՑՈՒՄԻՆ ԱՌԻԹՈՎ)

Ընթերցողները, յատկապես Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի համակիրները, սիրահարները վստահաբար երբ կարդան այս նշմարը, աւարտին անոնք պիտի ունենան հետեւեալ արտայայտութիւնը. «Նո՛ր բարի լոյս...»:

Պէտք է ըսել, սակայն, որ երբեք ուշ չէ հարցերը մատնանշելու: Ճիշդ է, որ Ա. դասակարգ մնալու իմաստով հաւասարար յոյսերը ի դերեւ ելած են, թուաբանական հաշիւներով՝ հրաշք մը միայն համազօր կ'ըլլայ փրկութեան, սակայն ասիկա չի նշանակեր, որ մենք պիտի դադրինք մեր հետեւողական ընթացքէն: Մենք պարտաւոր ենք թերութիւնները մատնանշելու՝ երեք պատճառներով:

Ա.- Իբրեւ մամուլ, մեր պարտականութիւնն է որեւէ մրցումի կամ երեւոյթի գնահատականը կատարել, լաւին՝ լաւ ըսել, իսկ խոցելիին՝ խոցելի:

Բ.- Իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ական իրաւունք չունինք «պէնքերը վար դնելու» եւ ըսելու, որ ամէն բան վերջացած է արդէն, հետեւաբար ի՛նչ օգուտ:

Գ.- Պատմութեան հաշուոյն ճիշդ պիտի չըլլայ լռելեայն կամ անտարբեր անցնիլ դէպքերու կամ երեւոյթներու վրայէն: Ի վերջոյ մամուլին մէջ արժանագրութիւնները մաս կը կազմեն պատմութեան, այս պարագային՝ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի պատմութեան, առ այդ պէտք է կատարել հարկաւոր նշումները:

Ռասինկ - Հ.Մ.Ը.Մ. երկուսն մրցումէն (2-2) ետք, այս եղանակին հաւանաբար առաջին անգամ ըլլալով Հ.Մ.Ը.Մ.ի համակիրները ամէնէն աւելի ընդվզեցան: Ոչ թէ արդիւնքին համար անշուշտ, այլ՝ ընթացքին: Պաշտին վրայ մեր տեսածը կարելի չէ ըստ ամենայնի ընդունիլ եւ առանց ծայր բարձրացնելու հետանալ: Երեկ, Հ.Մ.Ը.Մ. կրնար իջուրաւ արձանագրել արժանի յաղթանակ մը (որ ի դէպ կ'ըլլար եղանակի առաջինը), եթէ խումբի կազմութեան իմաստով կատարուէր ճիշդ ընտրութիւն: Երկու «մահացու» սխալներ պատճառ դարձան երկուսն անբարար արդիւնքին:

Ա.- Մրցումին սկիզբէն իսկ բերդապահ Աշրաֆ Մահմուդի դաշտ ներկայութիւնը: Ի՞նչ առաւելութիւն ունի փաստօրէն երկուսն բերդապահը: Ոչ մէկ: Աշրաֆի ստացած երկրորդ կոլին ի տես, շատ յստակ կը դառնայ մեր հաստատումը:

Բ.- Անհասկնալի մեծագոյն կէտք, անընդունելի ինչ «թաքթիք» կրնայ ըլլալ այս մէկը, մանաւանդ որ մենք եւս ամբողջական յարձակողական խաղաոճէ բացի ուրիշ ընտրանք չունինք: Յակոբիկի մը նման մարզիկի մը ներկայութիւնը կը ցանկան ունենալ անտարբեր բոլոր խումբերը, իսկ մենք պայն կը պահենք պահեստի նստարաններուն վրայ եւ միայն 60րդ վայրկեանին դաշտ կը ներկայացնենք: Փաստօրէն Յակոբիկի ներկայութեան, մեր խաղարկութիւնը ամբողջովին յեղաշրջուեցաւ, բայց արդէն ուշ էր, որովհետեւ ժամանակը չէր բաւեր երրորդ կոլ մը նշանակելու:

Ահաւասիկ երկուսն մրցումին մեր գլխաւոր սխալները (երկրորդական այլ սխալներու կողքին), որոնց հետեւանքով վրիպեցան մեր երեք կէտերը: Հասկնալի է ու ճիշդ՝ որ Հ.Մ.Ը.Մ.ի պատմական անտարբեր մարզիչը ձգեց սպասու: Ի վերջոյ մարզիչը ի՛նչ կ'որոշէ իր թիւնը եւ ինչ է խումբին խաղարկութեան տերն ու տիրակալը: Սակայն ան երբ կը սխալի, տեղ մը նսեւ հարկադրուած է տալու բացատրութիւն:

Վերջին խօսք՝ մեր անման ու սիրելի համակիրներուն: Անոնք միանգամընդ միշտ ապացուցեցին, թէ կը մնան Հ.Մ.Ը.Մ.ի վայել համակիրներ: Խումբին այս տազնապալի կացութեան մէջ, արհամարհելով այլապես անհաճոյ իրենարարող պարտութիւնները, անոնք խուռներամ ուղղուած էին դաշտ ու ամբողջ 90 վայրկեան ոգի ի բոնի քաջալերեցին խումբը, արժանանալով դաշտի տեղացի թղթակիցներու ջերմ գնահատանքին ու նաեւ վարմանքին. անոնք սպառնաբար հարց կու տային իրարու. «Ի՞նչ մարդիկ են ասոնք...»:

Բայց մեզի համար վարմանալի բան չկայ, որովհետեւ գիտենք, թէ Հ.Մ.Ը.Մ.ականը այսպէս եղած է միշտ, է՛լ այսօր ալ, ու պիտի մնայ ընդմիշտ միեւնոյն այս համոզումով, միեւնոյն այս ոգիով:

## ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՆ

### ՌԱՍԻՆԿ - Հ.Մ.Ը.Մ.՝ 2-2

Լիբանանի ֆուտբոլի ֆուտբոլի ֆուտբոլի 16րդ հանգրուանին, երեկ, Պուրձ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ տեղի ունեցած մրցումը՝ Ռասինկի եւ Հ.Մ.Ը.Մ.ի միջեւ, վերջ գտաւ 2-2 արդիւնքով: Երկու խումբերն ալ, որոնք կը ձգտէին եղանակի իրենց առաջին յաղթանակին, դարձեալ ձախողեցան եւ երթին նման իրարմէ բաժնուեցան հաւասարութեամբ, 2001-2002 եղանակի իրենց չորրորդ կէտը հաւաքելով:

35րդ վայրկեանին, Ռասինկի մարզիկ Ժան-Բլոս Բամալ նշանակեց իր կազմին եւ մրցումին առաջին կոլը, Հ.Մ.Ը.Մ.ի պլովի քառակուսին մէջ առանձին մնայէ ետք: Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական կազմին հաւասարութեան կոլը չուշացաւ. վայրկեան մը ետք խմբապետ Գօգօ Ալոյեանի մէկ քոռնըրէն ետք, Բաֆֆի ճուլֆայեան գլուխով գնդակը շարունակեց Ռասինկի բերդէն ներս:

Բ. կիսախաղին 16րդ վայրկեանին դաշտ ներկայացաւ Յակոբ Տօնապետեան: 75րդ վայրկեանին, անոր կատարած մէկ փոխանցումին վրայ, Վլատիմիր Փալիսեիչ նշանակեց Հ.Մ.Ը.Մ.ի երկրորդ կոլը: Հինգ վայրկեան ետք, Ռասինկ նշանակեց իր հաւասարութեան կոլը, շնորհիւ՝ Ֆրայտէի, որ օգտուեցաւ Հ.Մ.

Ը.Մ.ի բերդապահ Աշրաֆ Մահմուդի (որ եղանակի իր առաջին մրցումը կը կատարէր) աններելի սխալէն:

Մրցումին կորսուած վայրկեաններուն, Ռասինկի խմբապետ Թոնի Ռահի իր երկրորդ դեղին քարտը ստանալով, դաշտէն վտարուեցաւ:

16րդ հանգրուանի սպասուած ճակատումը՝ Նըժմէի եւ Հ.Մ.Մ.ի միջեւ վերջ գտաւ ի նպաստ առաջինին, 3-0 արդիւնքով: Մուսա Հըժէյժ, Պիլալ Ֆլէյֆէլ եւ Ապպէս Աթուէ նշանակեցին Նըժմէի երեք անպատասխան կոլերը:

Հակառակ իր արձանագրած այս յաղթանակին, սակայն, Նըժմէ մնաց 2րդ դիրքին վրայ, երկու կէտով ետ մնալով պարագլուխի դիրքը գրաւող Սաժէսէն, որ 3-1 արդիւնքով պարտութեան մատնեց Ահլի Սայտաւ: Փոյ Ռըպոմ եւ պրապիլի Թոնի (2 կոլ) նշանակեցին Սաժէսի կոլերը, իսկ Մարուան Խալէտ՝ հարաւոր կազմին կոլը:

Թրիփոլի մէջ, Սալամ 4-0 արդիւնքով ծանր պարտութեան մատնեց իր հիւրը՝ Ախա Ալի Ալէյը: Մուսա Ապու Պաքըր (2 կոլ), Սամպա եւ Ֆուատ Ֆահրտ նշանակեցին Սալամի չորս անպատասխան կոլերը:

Ստորեւ՝ 16րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Ահլի Սայտա - Սաժէս	1-3
Հ.Մ.Մ. - Նըժմէ	0-3
Սալամ - Ախա Ալէյ	4-0
Ռասինկ - Հ.Մ.Ը.Մ.	2-2
Ախտ - Թատամոն Սուր	1-3

ԱՅՍՈՐ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Պըրժ - Սաֆա	2:45ին	Պէյրուք
Շ. Սահէլ - Անսար	4:45ին	Մ. Աւան

ԳՄԱՍԵՐՈՐԵՄ	ԽՈՒՄԲ	Մ.	Յ.	Հ.	Պ.	Ն.	Ս.	ՆԵՏ
1.- Սաժէս	16	12	3	1	37	22	39	
2.- Նըժմէ	16	11	4	1	40	13	37	
3.- Թ. Սուր	16	8	7	1	31	13	31	
4.- Սալամ	16	9	3	4	29	14	30	
5.- Շ. Սահէլ	15	9	3	3	27	16	30	
6.- Սաֆա	15	8	3	4	27	18	27	
7.- Ախտ	16	7	2	7	19	23	23	
8.- Պըրժ	15	6	4	5	25	22	22	
9.- Ախտ	16	5	6	5	21	22	21	
10.- Անսար	15	4	5	6	17	21	17	
11.- Հ.Մ.Մ.	16	2	4	10	17	33	10	
12.- Ա. Սայտա	16	2	2	12	14	37	8	
13.- Հ.Մ.Ը.Մ.	16	-	4	12	13	32	4	
14.- Ռասինկ	16	-	4	12	10	41	4	

## ՊՈՒՆՏՍԵՆԿԱ

### ՊԱՅԻՐ ԼԵՒԵՐՔՈՒՉԸՆ ԿԸ ՄՆԱՅ ԱՌԱՋԻՆ

Գերմանիոյ ֆուտբոլի ֆուտբոլի ֆուտբոլի ֆուտբոլի 26րդ հանգրուանի մրցումներուն, առաջին երեք դիրքերը գրաւող խումբերը յաղթանակներ արձանագրեց, 3-1 արդիւնքով պարտութեան մատնեց միջեւ կէտերու տարբերութիւնը մնաց նոյնը եւ անոնք մնացին իրենց նոյն դիրքերուն վրայ: Պարագլուխի դիրքը գրաւող Պայեր Լեւերքուլըն, որ մէկ կէտի առաւելութիւն մը ունի 2րդ դիրքը գրաւող Պորուսիա Տորթմունտի վրայ, 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց:

Միւնիխի տերպին՝ Պայեր Միւնիխի 1860 Միւնիխի միջեւ, վերջ գտաւ առաջինին դժուար յաղթանակով, 2-1 արդիւնքով: 68 հաւաքող համակիրներու ներկայութեան Փաուլո Սերճիո (72րդ) եւ Թորսթեն Ֆիլիպ (90րդ) նշանակեցին Պայերի կոլերը, իսկ Մարթին Սթրանցը՝ 1860 Միւնիխի կոլը (75րդ):

26րդ հանգրուանի մրցումներուն, մեծագոյն յաղթանակը, սակայն, եղաւ Հերթա Պերլին, որ 6-0 արդիւնքով ջախջախեց իր հիւրը՝ Համպուրկը: Յաղթական կազմին մարզիկներէն Պարթ Կուր նշանակեց 4 կոլ:

Ստորեւ՝ 26րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Շալքէ - Շթրօպարթ	2-1
Հերթա Պերլին - Համպուրկ	6-0
Պայեր Միւնիխ - 1860 Միւնիխ	2-1
Պայեր Լեւերքուլըն - Քոթպուս	2-0
Չանք Փաուլի - Ֆրայպուրկ	1-0
Նիւրնբերկ - Վերտըր Պրեմըն	0-4
Վոլֆսպուրկ - Բէօլն	5-1
Հանպ Ռոսթըր - Քայլըրսլայտերն	2-1
Պորուսիա Տորթ. - Պորուսիա Մէօնչըն	3-1

ԳՄԱՍԵՐՈՐԵՄ	ԿԵՏ
1. Պայեր Լեւերքուլըն	53 (61-31)
2. Պորուսիա Տորթմունտ	52 (42-22)
3. Պայեր Միւնիխ	50 (51-20)
4. Շալքէ	48 (41-26)
5. Քայլըրսլայտերն	48 (50-38)

## ՊԱՏԵԹՊՈՒԼ

### ԱՅՍՈՐ՝ ՔԱՀՐԱՊԱ - Հ.Մ.Ը.Մ.

Լիբանանի պաքթօպոլի տղոց ֆուտբոլի մրցումներուն, այսօր տեղի կ'ունենայ Քահրապա - Հ.Մ.Ը.Մ. մրցումը, առաջինին դաշտին վրայ, ժամը 20:00ին:

Երեք մրցումէն երկու յաղթանակ ապահովող խումբը կ'ապահովէ Ա. դասակարգի տոմսը:

Քահրապա Ա. դասակարգի ֆուտբոլի մրցումներուն աւարտեց նախաձեռնին դիրքին վրայ, իսկ Հ.Մ.Ը.Մ.՝ Բ. դասակարգի 2րդ դիրքին վրայ:

## ԵՍԼՉՈ

### ԻՆԹԵՐ ՄԻԼԱՆ - ԵՌՎԵՆԹՈՒՍ՝ 2-2

Իտալիոյ ֆուտբոլի ֆուտբոլի ֆուտբոլի 26րդ հանգրուանի գագաթի ճակատումը, որ տեղի ունեցաւ «Սան Սիրօ»ի մէջ՝ Ինթեր Միլանի եւ Երվենթոսի միջեւ, վերջ գտաւ 2-2 արդիւնքով: Մրցումին ներկայ էր 79 հազար համակիր: Երկու կազմերն ալ իրարաւնչ չէին կիսախաղին ընթացքին նշանակեցին մէկական կոլ: Տալիտ Թրեպէլէ (13րդ) եւ Իկոր Թուտոր (81րդ) նշանակեցին Երվէի կոլերը, իսկ Ինթերի կոլերը՝ Բլարէս Սիտորէ (6րդ) եւ 90րդ):

Հոռմ քաղաքի տերպին՝ Լաջիօ Ռոմայի եւ Ա. Էս. Ռոմայի միջեւ, վերջ գտաւ երկրորդին յաղթանակով (5-1), որ իր արձանագրած այս յաղթանակին շնորհիւ գրաւեց պարագլուխի դիրքը, գերապանցելով Ինթերը: 75 հազար համակիրներու ներկայութեան Վինչենչո Մոնթելա նշանակեց չորս կոլ (13րդ, 30րդ 37րդ եւ 64րդ), իսկ Ֆրանչէսքօ Թոթի՝ վերջին կոլը (72րդ): Տեժան Սթանըրվիչ նշանակեց Լաջիոյի կոլը (54րդ):

Ա. Սէ. Միլան կրեց եղանակի իր 6րդ պարտութիւնը, 2-0 արդիւնքով պարտուած հեռանալէ ետք Պոլոնիայի դաշտէն: Հիրընկալ կազմը իր երկու կոլերն ալ նշանակեց Ա. կիսախաղին, շնորհիւ՝ Սալվատորէ Ֆրեպիի (3րդ) եւ Խուլիօ Քրուլի (24րդ):

Փարմա 1-0 արդիւնքով պարտուած հեռացաւ Վերոնայի դաշտէն, երբ մրցումին աւարտէն վեց վայրկեան առաջ Ատորիան Միլիթի փենալթիով նշանակեց հիրընկալ կազմին կոլը:

Ստորեւ՝ 26րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Աթալանթա - Լեչէ	2-1
Պոլոնիա - Ա. Սէ. Միլան	2-0
Ֆիորենտինա - Ռուինետէ	0-0
Փրաչէնցա - Փերուճիա	2-0
Թորինօ - Քիեւօ Վերոնա	2-2
Վենետցիա - Պրեշիա	1-2
Վերոնա - Փարմա	1-0
Ինթեր Միլան - Երվենթոս	2-2
Լաջիօ Ռոմա - Ա. Էս. Ռոմա	1-5

ԳՄԱՍԵՐՈՐԵՄ	ԿԵՏ
1.- Ա. Էս. Ռոմա	53 (40-16)
2.- Ինթեր Միլան	53 (46-23)
3.- Երվենթոս	52 (49-21)
4.- Պոլոնիա	44 (30-26)
5.- Քիեւօ Վերոնա	40 (44-37)
6.- Ա. Սէ. Միլան	38 (35-28)

16.- Լեչէ	24 (26-39)
17.- Ֆիորենտինա	21 (27-49)
18.- Վենետցիա	15 (24-49)

ONE SECOND IS ENOUGH...  
Արագը Կը Պատահէ Երկվարեանի Մը Մեջ...

...BUT WE USE THEM ALL.  
...ԻՍԿ ՄԵՐ ԵՐԿՄԵ ԵՄ ԱՄԵՆ ԵՐԿՎԱՐԵԱՆԻ ՄԸ ՄԵՋ...

ԱՖՏԻԼ AFHIL

Աֆիլի Ենթ, P. Բարկ, 7օժ. Եւ Յարս. (01) 262231-24256-24257  
Imm. AFED, 24me étage, Tél. and Fax: (01) 262231-24256-24257

Cut, Polish & Repair

all kinds of diamonds and colored stones  
semiprecious, synthetic and quarts

Permanonkian est. founded in 1948

Bouj-Hamoud, Armenia str., near Clarion Tel.: 01-260768

